ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոնի

տնօրեն՝ _____ Ա. Հայրապետյան

# ԿԱՐԾԻՔ

## Վազգեն Հախոյանի «Վանանդի (Կարսի) և Շիրակի նահանգներում թուրքական բանակի զանգվածային հանցագործությունները (1920-1921 թթ.)

Է.00.01- «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

1920թ թուրք-հայկական պատերազմը հայոց նորագույն պատմության ամենաողբերգական էջերից է: Այն ոչ միայն վերացրեց հայոց նորանկախ պետականությունը, այլ նաև ապահովեց հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության շարունակականությունը:

Թուրք-հայկական պատերազմի ժամանակ հայ բնակչության նկատմամբ թուրքական բանակի իրականացրած զանգվածային հանցագործությունների թեման հետազոտվել է թե՛ խորհրդահայ և թե՛ սփյուռքահայ պատմաբանների կողմից: Ստեղծվել է հուշագրական և պատմագիտական հարուստ գրականություն: Սակայն դրանք չեն ներկայացվել հայոց ցեղասպանության շարունակականության տեսակետից: Ներկայացնելով թուրքական վայրագությունները, խորհրդահայ և սփյուռքահայ պատմաբանները կարծես ավելի շատ մեղադրել են միմյանց, քան թե թուրքերին: Հայ բնակչության ողբերգության մեղավորներ համարելով մի կողմից դաշնակցական կառավարությանը, մյուս կողմից՝ բոլշևիկներին:

Վիճակը փոխվել է Հայաստանի Հանրապետության տարիներին, երբ կուսակցական մոտեցումը դադարել է դեր խաղալ հայ պատմագիտության մեջ և ավելի շատ արծարծվել է արևելահայության ցեղասպանության շարունակականության գաղափարը: Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի և Ցեղասպանության թանգարան ինստիտուտի կողմից:

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն իր հետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններից մեկը համարել է Ալեքսանդրապոլի գավառում թուրքական ցեղասպան քաղաքականության շարունակականության ուսումնասիրությունը:

Շիրակի պատմամշակութային ժառանգության նվիրված բազմաթիվ գիտաժողովների ընթացքում հանրահռչակվել են ինչպես արխիվային սկզբնաղբյուրներ, ընդ որում մեծ մասն առաջին անգամ, այնպես էլ բանահավաքչական նյութեր, գիտական ուսումնասիրություններ:

Այնուամենայնիվ, չնայած կատարված հսկայական աշխատանքին, թեման չի կորցրել իր գիտական նշանակությունը և արդիականությունը: Այս առումով գնահատելի է ասպիրանտ Վազգեն Հախոյանի կատարած ուսումնասիրությունը, որն իր մեջ պարունակում է գիտական նորույթ, արդիական է և ունի գործնական նշանակություն:

Մասնավորապես, գիտական նորույթ է Կարսի մարզում հայ բնակչության կոտորածների և թալանի, մարզի հայաթափման և բնակչության հայրենազրկման ուսումնասիությունը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի և Վանանդի ու Շիրակի նահանգներում 1920-21թթ.ընթացքում թուրքական բանակի կողմից իրականացրած հանցագործությունների համեմատական վերլուծությունը: Այն թույլ է տվել հեղինակին կարևոր եզրակացության հանգել, որ ոչ տարածքի, ոչ ժամանակի, ոչ կառավարությունների և ոչ էլ կուսակցությունների գործունեության, այլ թուրքերի հայատյաց քաղաքականության հետևանք էին վերոհիշյալ հանցագործությունները, որոնք այլ կերպ հնարավոր չէ ձևակերպել, քան ցեղասպանություն: Օսմանյան կայսրության զինուժը հայ բնակչության դեմ օգտագործելու ժառանգական գործելաոճը սկսվելով Աբդուլ Համիդից շարունակվել է բոլոր թուրքական իշխանությունների կողմից:

Արդիականության տեսակետից թեման շատ դիպուկ և տեղին է ընտրված, որը գալիս է հաստատելու հայոց ցեղասպանության շարունակականությունը: Միանգամայն իրավացի է ատենախոսը, երբ 2020թ.արցախյան պատերազմը համարում է հայոց ցեղասապանության շարունակականության հստակ դրսևորում (տե՛ս էջ 6-7 ):

Աշխատանքի կարևոր արժանիքներից է ոչ միայն զինվորականների, այլ նաև խաղաղ հայ բնակչության նկատմամբ թուրքական բանակի վայրագությունների նկարագրությունը: Գնահատելի է հատկապես ականատեսների վկայությունների և արխիվային նյութերի համադրումը: Առանձնապես շատ գովելի է բանահավաքչային նյութը գիտական շրջանառության մեջ դնելը, որը կարող է սկիզբ դառնալ ցեղասպանված յուրաքանչյուր հայ մարդու ցեղասպանության և վերապրումի պատմության շարադրմանը:

Իր աշխատանքով հեղինակը փշրում է հայ «քաղաքական էլիտայի» խաղաղության օրակարգի թեզերը՝ բացահայտելով թուրքական խաղաղության օրակարգի էությունը, մատնանշում դրանց անհամատեղելիությունը:

Աշխատանքն ունի պատմական և քաղաքական նշանակություն: Ատենախոսությունում ներկայացված է Հայոց ցեղասպանության շարունակականությունը Վանանդի և Շիրակի նահանգներում 1920-21թթ, բացահայտված են թուրքական դիվանագիտական զինանոցում մշակված հայասպանության բազմաթիվ մեթոդներ, ընդգծված է անխուսափելի կործանումից և շարունակվող ցեղասպանությունից փրկվելու հայոց ազգային ռազմավարության անհրաժեշտությունը: Հետևաբար այն հայոց ազգային անվտանգության ռազմավարությունը մշակողների համար կարևոր աղբյուր կարող է լինել՝ ազգային ռազմավարության խնդիր համարելով թուրքական գործոնին հայկական գործոնի հակադրումը:

Ի վերջո այն կարևոր հիմք կարող է հանդիսանալ միջազգային ատյաններում հայոց ցեղասպանության հարցի արծարծումների և իրավական կարգավորումների համար:

Ատենախոսությունն ունի կուռ և տրամաբանական կառուցվածք, այն ունի երեք գլուխ համապատասխան ենթագլուխներով և հավելվածով:

Ատենախոսության առավել հաջողված և նորույթ պարունակող բաժիններից են 1-ին գլխի առաջին ենթաբաժինը, որը վերաբերում է 1919-1920թթ Կարսի մարզ վերադարձած գաղթականների թվին և տեղաբաշխմանը, ինչպես նաև 3-րդ գլխի 1-ին և 2-րդ ենթաբաժինները, որոնք նվիրված են Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի և 1920-21թթ Վանանդի և Շիրակի նահանգներում հայ բնակչության կոտորածների գործում թուրքական բանակի կատարած դերակատարմանը և դրանց համեմատական վերլուծությանը:

Ասպիրանտը իրավացիորեն նշում է, որ երկու դեպքում էլ թուրքական բանակը ոչ միայն պատերազմում էր հայկական զինված ուժերի դեմ, այլ դրան զուգահեռ իրագործում արևմտահայ գաղթականության և արևելահայության կոտորածները:

Վազգեն Հախոյանը անդրադարձել է նաև թուրքական բանակի կողմից Վանանդի և Շիրակի նահանգներում1920-21թթ.և Մեծ եղեռնի ժամանակ իրականացված զանգվածային հանցագործությունների առանձնահատկություններին:

Մասնավորապես, կարևոր առանձնահատկություն է համարել այն, որ 1920-21թթ. թուրքական բանակի գործողություններն ուղղված էին ոչ թե հպատակ ժողովրդի, այլ ինքնիշխան պետության դեմ, նպատակ ունենալով պետականության վերացումով ոչնչացնել նաև ժողովրդին: Եթե Մեծ եղեռնի ժամանակ հպատակ ժողովրդին ոչնչացնում էին, հայրենազրկում ապա այս դեպքում պետականությունն են ոչնչացնում: Եթե Մեծ եղեռնի ժամանակ թուրքական բանակին ինչ որ չափով զսպում էին ռուսական բանակը, կամավորները, ինչպես նաև ինքնապաշտպանական մարտերը,

ապա 1920-21թթ հայ բնակչության պաշտպանությունը դրված էր հայկական բանակի վրա, որը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չկարողացավ պաշտպանել խաղաղ բնակչությանը:

Արժեքավոր է նաև 1920-21թթ Վանանդի և Շիրակի նահանգներում կոտորածներին քրդերի մասնակցության բարձրաձայնումը: Ինչպես օսմանյան կայսրությունում այնպես էլ Արևելյան Հայաստանում 1920-21թթ.կոտորածներին մասնակցում էին քրդերը: Համեմատվում են նաև սպանությունների ձևերը՝ ողջակիզումները, ծխախեղդ անելը, ջրհորներում խեղամահ անելը, ծիսական սպանությունները, դիերի խոշտանգումները, կանանց և երեխաների նկատմամբ բռնությունները:

Ատենախոսության կարևոր արժանիքներից է վերապրածների և ականատեսների բանավոր պատմությունները գիտական շրջանառության մեջ դնելը:

Թվարկված արժանիքներից զատ գրախոսվող աշխատանքը զերծ չէ նաև բացթողումներից և վրիպումներից: Բնականաբար, հարկ ենք համարել արտահայտել նաև նկատված մի քանի դիտողություններ, նկատառումներ ու ցանկություններ.

1. Աշխատության ներածական մասում թեմային առնչվող պատմագիտական գրականության հանդեպ ցուցաբերված է քննական վերլուծական մոտեցում, թեև ոչ շատ խորը:
2. Թեման ավելի ամբողջական կլիներ, իսկ հետազոտության հիմնական պնդումը՝ ցեղասպանության շարունակականությունը 1920-21թթ.Վանանդի և Շիրակի նահանգներում ավելի հստակ կերևար, եթե այն ժամանակագրական առումով ընդգրկեր նաև 1918 թվականը: Առանց 1918թ.թուրքական արշավանքի ժամանակ թուրքական բանակի կատարած հանցագործությունների ներկայացման՝ ցեղասպանության շարունակականության շղթայի մի օղակը կարծես բաց է մնում: Մանավանդ որ ատենախոսն իր աշխատանքում շատ հաճախ անդրադառնում է նաև 1918 թվականին Արևելյան Հայաստան արշավելու ժամանակ թուրքական բանակի հայ ժողովրդի կոտորածներում ունեցած դերակատարմանը: (տե՛ս էջ 19, 30,135/:
3. Աշխատանքում օգտագործվող հանցագործություն և ցեղասպանություն հասկացությունները կարելի է հստակեցնել: Ամեն մի հանցագործություն չէ, որ ցեղասպանություն է, մինչդեռ ցեղասպանությունը հանցագործություն է, ոչ միայն հայ ազգի, այլ նաև մարդկության դեմ:
4. Առանձին նախադասություններ շարահյուսական տեսակետից կարելի է վերաձևակերպել: Օրինակ թեմայի արդիականությունը պայմանավորված է.Հայոց ցեղասպանության շարունակականությունը Արևելյան Հայաստանում մատնաշելու հանգամանքով նախադասությունը կարելի է ձևակերպել թերևս հետևյալ կերպ՝ թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայոց ցեղասպանության շարունակականության առկայության հանգամանքով:

5. Թեմայի արդիականությունը իրավամբ պայմանավորելով նաև արցախյան պատերազմներով և դրանց ժամանակ տեղի ունեցած դեպքերով, կարծում ենք անհրաժեշտություն չկա այս թեմայի շրջանակներում նման մանրամասնությամբ ներկայացնել արցախյան պատերազմները: (տե՛ս ներածություն էջ 6-8): Դրա փոխարեն կարելի էր ավելի ամբողջական ներկայացնել թեմայի արդիականությունը: Օրինակ, այն պայմանավորել ոչ միայն հայոց ցեղասպանության ժխտմամբ, այլ նաև հայոց ինքնության ոչնչացման, հայոց պետականության և համայն հայությանը սպառնացող վտանգների առկայությամբ,համայն հայության և հայոց պետականության գոյությունն առավել քան երբևէ վտանգված լինելու հանգամանքով:
6. Ինչ վերաբերում է գիտական նորույթին, ապա այն ամենից առաջ կայանում է Վանանդի և Շիրակի նահանգներում թուրքական բանակի վայրագությունների մեթոդների համեմատության, դրանք ամբողջական մեկ շղթայով ներկայացնելու և արևելահայոց ցեղասպանության պետական մակարդակով իրականացումը բարձրաձայնելու մեջ:
7. Թեմայի գործնական նշանակությունը ևս թերի է ներկայացված Բացի ատենախոսի կողմից նշվածներից (տե՛ս ներածություն էջ 8) կարելի ավելացնել նաև, որ այն կարևոր աղբյուր է նաև հայոց ազգային անվտանգության ռազմավարության մշակման և գործնական քաղաքականության համար:
8. Թեև շատ գնահատելի է Շիրակի նահանգի որոշ վայրերում առանձին մարդկանց հնարավորության սահմաններում ինքնապաշտպանության փորձերի մասին գրելը, սակայն ցավոք նշել է միայն Մեծ Քափանակ գյուղում կազմակերպված ինքնապաշտպանություն մասին: (տե՛ս էջ 65): Բայց նման դեպքեր շատ են եղել, և աշխատանքի արժեքը մեծապես կբարձրանար, եթե այլ դեպքեր ևս ներկայացվեին, մանավանդ որ ատենախոսը բանահավաքչական ահագին նյութերի է տիրապետում: Ցանկալի կլիներ, եթե ատենախոսը համադրեր նաև ինքնապաշտպանական մարտերը Մեծ եղեռնի և 1920-21թթ Վանանդի և Շիրակի նահանգներում: Ցույց տար դրանց տարբերությունները, մասշտաբները, դիմադրելու հնարավորությունները, ձևերը:
9. Ներկայացնելով թուրքերին աղ ու հացով դիմավորելու դեպքերը Շիրակի նահանգի գյուղերում, ատենախոսը դրանք մի կողմից՝ պայմանավորում է բնակչության ֆիզիկական գոյությունը ապահովելու, մյուս կողմից՝ բոլշևիկների ակտիվ քարոզչության հետ (էջ 63): Սակայն վերոհիշյալ թեզը աշխատանքում հիմնավորված չէ, մինչդեռ ակնհայտ է, որ թուրքերին աղ ու հացով դիմավորում էին թուրք ոճրագործների նախաձեռնությամբ, որոնք խոստանում էին չկոտորել բնակչությանը իրենց դիմավորելու և չդիմադրելու պարագայում: Դրանք թուրքական բանակի կողմից հայ անպաշտպան բնակչության նկատմամբ իրականաց-

վող հանցագործություն էին, հայերի դիմադրական ոգին կոտրելու մտածված քայլեր: Մասամբ չէին կոտորում այն գյուղերի բնակիչներին, որտեղ նրանց դիմավորում էին: Շատ հաճախ իհարկե սպանում էին նաև դիմավորողներին, եթե նրանք ինչ որ չափով փորձում էին ընդդիմանալ: Ատենախոսը չի բարձրաձայնում նաև այն հարցը, թե ինչու նման դեպքեր չեն եղել Կարսի նահանգում:

Վերջում նշենք, որ ատենախոսության հիմնական դրույթները տեղ են գտել սեղմագրում և համապատասխանում են նրա բովանդակությանը:

**Եզրակացություն**

Այսպիսով, ինչպես տեսնում ենք արված դիտողությունները չունեն սկզբունքային նշանակություն և չեն նսեմացնում աշխատության արժանիքները: Կարծում ենք ատենախոսին հաջողվել է համակարգված կերպով ներկայացնել **Վանանդի (Կարսի) և Շիրակի նահանգներում թուրքական բանակի զանգվածային հանցագործությունների ամբողջական պատկերը** որոշակի ժամանակահատվածում, այն է՝ **1920-1921** թվականներին:

Աշխատության էական նորույթն այն է, որ նա ուսումնասիրել է որոշակի ժամանակահատվածում **Վանանդի (Կարսի ) և Շիրակի նահանգներում թուրքական բանակի զանգվածային հանցագործություններն** իր ամբողջության մեջ: Արված ուսումնասիրությունը և դրանց շուրջ արված դիտողությունները ունեն ընդհանրական նշանակություն նշված ժամանակաշրջանի հայոց ցեղասպանության շարունակականության պատմության լուսաբանման տեսակետից: Ոստի, հիմք ընդունելով վերոհիշյալ արժանիքներրը, գտնում ենք, որ Վազգեն Հախոյանը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի
ավագ գիտաշխատող՝ պ.գ.թ. Կարինե Ալեքսանյան

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Կարինե Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի գիտական քարտուղար՝ Ա. Ակոպով